ընել, որովհետեւ անոնք որ այս կեղծիքը նուիրականացնելով գործածել կ'ուզեն, կրնան հեշտութեամբ ըսել որ նամակին խնդրական մասերը թարգմանիչին սխալներն են։

—o—

Յակոբ Զուղայեցիէ գրուած երկու ինքնագիր նամակներ կան Հաւատոյ Տարածման Ժողովին Դիւանին մէջ, որոնք լուսանկարել տալով հոս նախ կ'արտահանեմ լուսատիպ եւ յետոյ կ'արտագրեմ, պարզելով սղագրութիւնները։ Երկուքն ալ մեծապէս շահեկան նամակներ են եւ ճշգրիտ կերպով ցոյց կուտան կաթողիկոսին մտային եւ հոգեկան վիճակը կարգ մը հայ Հռոմէադաւաններու եւ Հռոմէադաւանութեան մասին։

«Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի նուաստ ծ(ա)ռ(ա)յ յ(ա)կ(ո)ք կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)ս ամենայն Հայոց։ Յորմէ հասցէ զիր ա(ւր)հնութե(ան), եւ նամ(ա)կ պահպանութե(ան)։ Շնորհք առ(ա)ք(ե)լ(ա)կ(ա)ն, եւ ա(ստուա)ծային բ(ա)զմ(ա)պ(ա)տիկ ա(ւր)հնութի(ւ)ն ի վ(ե)ր(ա) հոգեւոր որդոյ իմոյ ս(ա)րգիս վ(ա)րդ(ա)պ(ե)տիդ, եւ քոյոցդ ամ(ենայն)ի ի տ(է)ր խնդալ։»

«Եւ ընդ ա(ստուա)ծապարգեւ ա(ւր)հնութե(ան)ս ծանիր սիրելի որդի, քանի ինչ բան ի քէն լուեալ էի վ(ա)ս(ն) այն նեղսրտ(եա)լ էի քէն, որն իրաւ էր, որն ոչ։ Նախ արդ (ու)ր(ու)մցի Բ(ա)րս(ե)ղէն ուր որ գնում է խ(լ)ութի նմ(ա)ն է հոտ է հանում։ Չալակն տեղ առած ի թարվէզ նստ(եա)լ որ ի ոպ(ա)հ(ա)ն(ա)յ եկն ինձ գիր քohմաքի։ Մեք վ(ա)ս(ն) ա(ստուծո)յ այն ատել(ոյ)ն խղճում ենք, ինքն իւր հաչմ(ա)ն(ա)ցն չէ դադ(ա)րիլ։ Եւ կամ այսք(ան) ամիս ի թարվէզ ի՞նչ կու նստիս։ Որքան չատ նստիս այնք(ան) կանանհամ(ա)ն(ա)ս։ Երկ(ուր)դ կ(ո)ղմ(ա)նէ ծուռ էին գր(եա)լ։ Երբ(ո)րդ ա(ստուծո)յ ատելի մէլիքին կ(ո)ղմ(ա)նէ զոր դու ես գր(եա)լ։ Զ(ո)ր(ո)(ր)դ զայլն եւս լուեա եթէ հեռ(ա)ն(ա)լ կամիս ի ս(ուր)ք առ(ա)ք(ե)լոյ։ Հոգեւոր որդի ա(ստուծո)յ իրաւունք այն է որ տեղակ լինիք յ(ա)ռ(ա)ջ ս(ուր)ք աթ(ո)ռ(ո)ն հոգ(ո)յք եւ ապա ձերն։ Իսկ այժմս որ թուղթ էիր գր(եա)լ առ մեզ եւ եկ(եա)լ էր ի ձեռն ս(ա)հ(ա)կ վ(ա)ր(դ)ապ(ե)տին. զքո ձեռն տ(ա)լն խախտ(եա)լ քարէրին մեծ խնդութի(ւն) եղեւ սրտիս, զի մեր ասա խորհելն, եւ քո այտր ձեռնարկելն ա(ստուծո)յ հաճ(ո)յիցն է նշան։ Ճշմ(ա)րտիւ գրեմ զի ով ոք այդ վանուցդ նեղութի(ւ)ն կու կրէ իմ սիրելի որդին նայ է։ Զի ինձ պ(ա)ռաք ս(ուր)ք առ(ա)ք(ե)լոյդ հոգաբարձութի(ւ)ն։ Սիրելի որդի եթէ կամիս զիմ սիրտս չահել արիութե(ան) գօտի ընդ մէջ ած զոր ինչ ձեռն(ա)րկէս ի կատ(ա)ր հասոյ։ Զիմ կամս այն էր ամենս ս(ա)հ(ա)կ վ(ա)ր(դ)ապ(ե)տն այլ տեղ ող(ա)րկէի այլ թուլ եւոս մինչ ի համբարձումն, ս(ուր)ք առ(ա)ք(ե)լոյ համար ժ(ո)ղ(ո)վ առնէ, եւ առ քեզ ող(ա)րկէ։ Զի տ(է)ր լիցի քեզ ձեռնտու, օգնական, փրկիչ եւ պ(ա)հ(ա)պ(ա)ն յամ(ենայն) վտ(ա)նգէ հոգոյ եւ մ(ա)ր(մ)ն(ոյ)։ Ի յիմ կողմ(ա)նէ անհոգ լեր զի Գ(երեք) կ(ո)ղմ(ա)նէ իմ սիրելի որդի ես։ Տ(է)ր առ(ա)ջ(նոր)դէ։ Յերբ տեսից զքեզ ի յայնժ(ա)մն պ(ա)տմեցի։ Ի յակին ձորն յունվարի Թ (9)։ Զեռ(ա)մբ իմով գրեցի։ Զի տ(է)ր ամ(ենայն)ի պ(ա)հ(ես)ցէ զքեզ անփ(ո)րձ ի յամ(ենայն) փ(ո)րձութ(են)է հոգոյ եւ ի մարմնոյ։ Զի մշ(ա)կ առանց ամօթոյ լիցիս ք(րիստոս)ի ա(ստուծո)յ մերոյ։ Ամէն։»

Թուական չկայ, թէեւ որոշ է որ գրուած է Յակոբ Զուղայեցիի Տիգրանակերտէն Կ. Պոլիս վերադարձուելու տարին, 1679ին։ Նամակը կը կրէ իր կաթողիկոսական կնիքը։

Ժամանակագրական կարգով Յակոբ Զուղայեցին 1678ի Սեպտեմբեր 28ին Կարին էր, ուր ե՞րբ հասնելուն մասին բան չենք գիտեր։ Հաւանական է որ իբր թէ իր կողմէ գրուած նամակին մէջ իր ճամբորդութեան մասին տուած մանրամասնութիւնները ճիշտ ըլլան։ Կեղծարար-խմբագրողը կրնար այդ տեղեկութեանց ծանօթ ըլլալ այլուստ, այսինքն թէ ինչպէ՞ս Յակոբ Զուղայեցի բանտարկուեցաւ եւ արդիլուեցաւ Կարնոյ մէջ եւայլն։ Առ ի չգոյէ ուրիշ աղբիւրի ընդունինք առ այժմ որ կաթողիկոսը ամիս մը Կարնոյ միջնաբերդին